Անի Վարդանյան[1]

ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

Ժամանակակից իրավական համակարգին բնորոշ է օրենսդրական գործընթացների բարձր ինտենսիվությունը: Հայաստանի Հանրապետությունը թևակոխում է սոցիալական, տնտեսական, քաղաքական բարեփոխումների իրականացման նոր փուլ, և դրանով է մեծապես պայմանավորված օրենսդրության ակտիվ զարգացումը: Այս պայմաններում հատուկ նշանակություն է ստանում արդյունավետ իրավաստեղծ գործունեությունը:

Արտասահմանյան երկրների այս ոլորտի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավաստեղծ գործընթացում կարևոր դեր ունի կանխատեսումը, ինչը ուղղված է որակյալ օրենսդրության ստեղծմանը, վերջինիս զարգացման ուղղությունների որոշմանը: Այս տեսանկյունից իրավաստեղծ գործունեության վերլուծությունը, վերջինիս հետևանքների կանխատեսմանն ուղղված միջոցների և հնարքների մշակումը օգտակար կլինեն իրավաստեղծ գործունեության սուբյեկտների առջև ծառացած խնդիրների արդյունավետ լուծման տեսանկյունից:

Ներկայումս բազմաթիվ օրենսդրական ակտերում առկա թերությունները խնդիրներ են առաջացնում իրավունքի կենսագործման փուլում, հանգեցնում են հասարակական հարաբերությունների անկայունության՝ աղավաղելով օրենսդրի կամքը: Սա հատկապես անթույլատրելի է այս փուլում, երբ մեր երկրում փորձ է արվում իրականացնել բարեփոխումներ, որոնք օրենսդրության մեջ հսկայական փոփոխություններ են ենթադրում: Որպես թարմ օրինակ վերցնենք կենսաթոշակային բարեփոխումները: Շուրջ 1 տարի երկրի օրենսդիր մարմինը փորձում էր ընդունել կենսաթոշակային բարեփոխումների կոնցեպտը: Արդյունքում 2013 թ. դեկտեմբերի 12-ին ընդունվեց «Կու-

[1] ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ, պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան:

տակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, իսկ 2014 թ. ապրիլի 2-ին Սահմանադրական դատարանն իր որոշմամբ հակասահմանադրական ճանաչեց օրենքի պարտադիր բաղադրիչը: 2014 թ. մայիսի 15-ին ընդունվեց «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, իսկ 2014 թ. հունիսի 21-ին արդեն ընդունվեց «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որի բովանդակությունը շատ քիչ ընդհանրություններ ուներ օրենքի սկզբնական տարբերակի հետ: Արդյունքում երկրում ստեղծվեց անկայուն իրավիճակ, հասարակության մի ստվար զանգված ընդվզեց: Եվ սա երկրի համար այսքան կարևոր բարեփոխման պարագայում: Արդյոք այս փոփոխությունները ի սկզբանե պատշաճ կարգով քննարկվել էին, արդյո՞ք հաշվի էին առնվել հասարակության բոլոր շերտերի շահերը, պատշաճ գնահատվել էին օրենքի կիրառման բոլոր հետևանքները: Հաշվի առնելով, որ վերջնական ընդունված օրենքի կոնցեպտը շատ քիչ առնչություն ուներ նախնականի հետ, կարելի է վստահաբար ասել, որ՝ ո՛չ:

Մեր օրերում, երբ գնալով աճում է ընդունվող նորմատիվ-իրավական ակտերի ծավալը, տրամաբանական հարց է ծագում. արդյոք մեր փոքր երկրի պարագայում արդարացված են այս չափի հսկայածավալ օրենսդրական փոփոխությունները: Այնպիսի արագությամբ են փոփոխվում օրենքները, որ անգամ վերջիններով սահմանված մարմինները չեն հասցնում ստեղծվել, ստեղծվում է մի իրավիճակ, երբ ընդունված նորմատիվ իրավական ակտերը հակասում են միմյանց, պարունակում են բլանկետային նորմեր, որոնք այդպես էլ չեն ընդունվում, կամ եթե ընդունվում են, իրականացման կառուցակարգերը չեն ապահովվում: Այս փոփոխություններին հաճախ չեն հասցնում հետևել ոլորտի մասնագետները, իսկ ոչ մասնագետների մասին խոսելն ավելորդ է: Ստեղծվում է անկայուն իրավական համակարգ, ինչի պայմաններում ավելորդ է խոսել որակյալ օրենսդրության, հասարակության իրավական մշակույթի ձևավորման և իրավական դաստիարակության մասին:

Օրենսդրական ակտերի ծավալների մեծացմանը զուգահեռ ի հայտ են գալիս այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են նորմատիվ-իրավական ակտերի ոչ բավարար որակը, բովանդակային և օրենսդրա-

կան տեխնիկայի անկատարությունը, ինչը էապես դժվարացնում է վերջիններիս իրականացումը: Խնդիրներ առկա են ոչ միայն նորմատիվ-իրավական ակտերի ստեղծման և կիրառման գործընթացում, այլև կարծում ենք, որ դրանք առկա են նաև ավելի վաղ փուլերում: Կարելի է թվել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են նորմատիվ-իրավական ակտերի մշակման հստակ նպատակների և ծրագրերի բացակայությունը, օրենսդրական տեխնիկայի կանոնների ոչ ճիշտ կիրառումը, նորմատիվ-իրավական ակտեր մշակողների ոչ պատշաճ պատրաստվածությունը, ընդունվող իրավական ակտերի ոչ բավարար ֆինանսավորումը, իրավակիրառող սուբյեկտների ցածր պրոֆեսիոնալիզմը և այլն: Ըստ էության, դեռևս նորմատիվ իրավական ակտի անհրաժեշտության մասին որոշման ընդունման փուլում, արդեն կարելի է խոսել իրավական ակտի հնարավոր արդյունավետության կամ վերջինիս բացակայության մասին: Սա հնարավոր է ինչպես ողջ իրավաստեղծ գործունեությանը, այնպես էլ առանձին նորմատիվ իրավական ակտի մշակման ռազմավարությանը առավել լուրջ մոտեցում ցուցաբերելու դեպքում:

Ցանկացած գործունեություն, և հատկապես նորմատիվ-իրավական ակտերի ընդունմանն ուղղված գործունեությունը, արդյունավետ է, եթե այն համապատասխանում իր հիմնական նպատակին, այս պարագայում՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված տնտեսական, քաղաքական, էկոլոգիական, սոցիալական, էթնիկ և այլ խնդիրների լուծմանը: Դրան կարելի է հասնել, նախ և առաջ, հստակ նպատակների սահմանմամբ, որոնց համար ընդունվում են նորմատիվ իրավական ակտերը, երկրորդ՝ նպատակների իրագործմանն ուղղված գործունեության ծրագրմամբ, ինչին օրենսդրության մշտապես փոփոխության պայմաններում առհասարակ ուշադրություն չի դարձվում:

Այսպես, Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքը հստակ կարգավորում է օրինագծերի ընդունման ընթացակարգը, փուլերը, բայց ինչ աշխատանքներ են տարվում նախքան նորմատիվ-իրավական ակտի նախագծի օրակարգ ընդգրկվելը, ինչն է հաշվի առնվում նորմատիվ-իրավական ակտի մշակման անհրաժեշտության վերաբերյալ որոշում ընդունվելիս, չի կարգավորվում ՀՀ որևէ նորմատիվ իրավական ակտով: Մենք այստեղ տեսնում ենք հսկայական բացթողում և լուրջ սխալ, որի ուղղումը հնարավոր է միայն օրինաստեղծ գործունեութ-

յան մշակման ռազմավարությանը լուրջ ուշադրություն դարձնելու դեպքում:

Հայտնի է, որ ցանկացած գործունեություն, առավել ևս իրավաստեղծ գործունեությունը, կարող է հաջողել, եթե այն իսկապես հստակ ծրագրված է դեռևս նախնական փուլում: Կասկածից վեր է, որ պլանավորումը, որը հիմնված է գիտական մոտեցման վրա, թույլ է տալիս կանխել այնպիսի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունումը, որոնք հիմնված չեն պետության և հասարակության զարգացման միտումների վրա, հաշվի չեն առնում այն բոլոր սոցիալական գործոնները, որոնք խթանում են վերջիններիս ստեղծման անհրաժեշտությունը և օգնում իրականացմանը: Ինչպես իրավացիորեն նշում է Օ. Ա. Գավրիլովը, հասարակության իրավական համակարգի նկատմամբ կանխատեսման մոտեցման կիրառումը հիմնվում է իրավաբանական գիտության կողմից ապագայի հայեցակարգի՝ կանխատեսման հիմնական կատեգորիաներից մեկի յուրացման վրա[2]:

Ցավոք, իրավաբանական գիտության մեջ շեշտը հիմնականում դրվում է օրենսդրության կատարելագործման և զարգացման երկարաժամկետ պլանավորման խնդրիների վրա, իսկ իրավական ռազմավարության խնդիրներին, ըստ էության, ուշադրություն չի դարձվում[3]: Ինչպես իրավացիորեն նշում է Պ. Լ. Կապիցան «միայն ապագայի մասին հստակ պատկերացում ունենալու դեպքում կարող ենք ճիշտ ուղղորդել մեր աշխատանքը ներկայում»[4]:

Փաստորեն, օրենսդրի կարևագույն խնդիրը որակյալ, արդյունավետ և մտածված օրենքների ընդունումն է, ինչը քաղաքացիական հասարակության ձևավորման նախապայմաններից է: Որակյալ, արդյունավետ և հիմնավորված ակտերի ստեղծումը պահանջում են օրենսդրության մեջ առկա խնդիրների խոր վերլուծություն և տեսական հետազոտություն: Գիտական և ուսումնական գրականության

---

[2] Տե՛ս **Гаврилов О. А.,** Правотворчество и актуальные проблемы социального развития// Право и правотворчество: вопросы теории. - М., 1982, էջ 44:

[3] Տե՛ս О некоторых аспектах правотворческой стратегии см.: **Гаврилов О. А.,** Стратегия правотворчества и социального прогнозирования. - М., 1993; **Поленина С. В.**, **Колдаева Н. П.,** О долгосрочном планировании развития законодательства // Советское государство и право. - 1979. N 6; **Поленина С.В.,** Законотворчество в Российской Федерации. - М., 1996:

[4] Տե՛ս Слово о науке. - М., 1976. Кн. 1, էջ 108:

մեջ կարելի է հանդիպել նորմատիվ-իրավական ակտերի գործողության ապահովման խնդրի վերաբերյալ տարաբնույթ կարծիքների: Դրա հետ մեկտեղ իրավաբանական դոկտրինան և պրակտիկան մինչ օրս չեն մշակել իրավական ակտերի հիմնավորվածության, կանխատեսման ապահովման խնդրի լուծման միասնական կոնցեպտուալ մոտեցում: Ընդգծելով իրավաստեղծ գործընթացի՝ որպես նորմատիվ-իրավական ակտերի հիմնավորվածության ապահովման գլխավոր միջոցի կարևորությունը, պետք է ուշադրություն դարձնել նորմատիվ-իրավական ակտերի նախապատրաստման և ընդունման գործընթացում հենց կանխատեսման ապահովվածության ոչ բավարար մակարդակին: Այս պահին առհասարակ բացակայում է նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակման փուլում կանխատեսման գործառույթի լիարժեք իրացման մեխանիզմը:

Կարծում ենք, որ նորմատիվ-իրավական ակտի նախագծի կանխատեսական ապահովվածությունը հենց *բովանդակային և ձևական-իրավաբանական գործոնների պայմանական ամբողջությունն է, ինչպես նաև նորմատիվ-իրավական ակտի՝ կանխատեսման մեթոդների և հնարքների լայնածավալ սպեկտրի կիրառման վրա հիմնված պոտենցիալ հնարավորությունն է ապագայում կարգավորելու հասարակական հարաբերությունները*: Կանխատեսական ապահովվածության հատկանիշը «նորմատիվ-իրավական ակտերի կանխատեսական անապահովվածությունն է», այսինքն՝ նորմատիվ-իրավական ակտի կենսագործման անհնարինությունը վերջինիս ոչ բավարար կանխատեսական ապահովվածության, կամ առհասարակ դրա բացակայության պատճառով, ինչը վերջինիս դարձնում է, ըստ էության, «մեռած»[5]: Կանխատեսական ապահովվածությունը գործող նորմատիվ-իրավական ակտի անբաժանելի բնութագիրն է: Եթե ակտը դրված է գործողության մեջ և առաջացնում է ծրագրված, ցանկալի իրավական հետևանքներ, հասնում է իր առջև դրված նպատակներին, հարկ է նշել վերջինիս կանխատեսական ապահովվածությունը դրական իմաստով: Իսկ եթե ձևական գործող նորմատիվ-իրավական ակտի իրավական նորմերը չեն գտնում իրենց արտահայտությունը իրավունքի սուբյեկտի փաստացի վարքագծում, ուրեմն նորմատիվ-իրավա-

[5] Տե՛ս **Аносова М. М.,** «Мертвое право» в контексте современного нормативного правопонимания: миф или реальность? // «Черные дыры» в российском законодательстве». – 2007. N 5.

կան ակտը մտածված չէ, հաշվի չեն առնված վերջինիս հնարավոր հետևանքները, նրա մեջ դրված չէ կարգավորիչ պոտենցիալ[6]:

Կարծում ենք, որ նորմատիվ-իրավական ակտի կանխատեսական ապահովվածությունը դրվում է իրավական կարգավորման գործընթացի հենց սկզբում: Օրինաստեղծ պրակտիկայի հետազոտությունը ցույց է տալիս, որ նորմատիվ-իրավական ակտի ոչ բավարար կանխատեսական ապահովվածության պատճառներն են ա) գործող նորմատիվ-իրավական ակտերի միջև առկա հակասությունները, բ) նորմատիվ-իրավական ակտի տեքստում մեծ քանակությամբ վկայակոչող և բլանկետային իրավական ակտերի առկայությունը, գ) նյութական նորմերի գործողությունը ապահովող ընթացակարգային իրավական նորմերի բացակայությունը, դ) ակտի կիրառության գնահատման մշակված գործընթացների բացակայությունը:

Իրավական ակտերի կանխատեսական ապահովվածության հասկացության մշակման համար անհրաժեշտ է անցկացնել քննարկվող կատեգորիայի վերլուծություն: Կարելի է թվել վերը նշված հասկացության առավել էական բնորոշ գծերը.

- Կանխատեսական ապահովվածությունը դա նորմատիվ-իրավական ակտի ունակությունն է, ներուժը՝ իրագործելու իր մեջ դրված կարգավորիչ գործառույթը՝ հաշվի առնելով վերջինիս կենսագործման բոլոր հնարավոր դրական և բացասական հետևանքները,
- Կանխատեսական ապահովվածությունը իրավական ակտի որակի, միաժամանակ վերջինիս արդյունավետության չափանիշն է,
- Կանխատեսական ապահովվածությունը՝ որպես իրավական կատեգորիա, իրեն առավել ամբողջական դրսևորում է իրավական ակտի իրացման գործընթացում[7] (անկասկած իրավական ակտի կանխատեսական ապահովվածությունը դրվում է հենց իրավաստեղծ գործընթացում),
- Կանխատեսական ապահովվածությունը կախված է ինչպես իրավական ակտի, այնպես էլ վերջինիս նկատմամբ արտաքին գործոնների մի շարք ձևական-իրավաբանական և բովանդակային բնութագրերից:

---

[6] Տե՛ս **Уразаев Ш. З.,** Модель закона: какой ей быть? – 1992. – էջ 9:

[7] Տե՛ս **Карпухин В. А.,** Нормативное социальное прогнозирование: критерии оптимальности. – М., 2000, 43, 44 էջ:

Նորմատիվ-իրավական ակտի կանխատեսական ապահովվածության գնահատման համար ելակետային է օրինաստեղծ գործունեության որակյալությունը: Օրինաստեղծ գործունեության որակը որոշվում է ակտի նախագծի գրագետ կազմամբ, իրավաբանական պրակտիկայի պահանջների, վերջինիս ոչ հակասականության, սահմանված նպատակներին իրավական ակտի համապատասխանության ապահովմամբ, օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանմամբ: Այստեղ առանցքային նշանակություն ունի օրինաստեղծ գործունեության սուբյեկտների ունակությունը վեր հանել, կանխատեսել նորմատիվ-իրավական ակտի ընդունման բոլոր հնարավոր հետևանքները:

Հայտնի է, որ իրավաստեղծ գործունեության սուբյեկտները, ովքեր փորձում են լուծել այս կամ այն սոցիալական խնդիրը, որպես կանոն, հայտնվում են հակամարտող սոցիալական շահերի բախման էպիկենտրոնում, որոնք հավակնում են օրենսդրական ամրագրման: Այս շահերը տեղ են գտնում խորհրդարանում և խորհրդարանից դուրս լոբբիստական խմբերի, քաղաքական կուսակցությունների և հոսանքների ակտիվ գործունեության մեջ, որոնք իրենց ներկայացուցիչներն ունեն օրենսդիր մարմնում, օրենսդրի վրա արտապառլամենտական ազդեցության ձևերում՝ մինչև վերջինիս վրա ուղիղ ճնշումը «փողոցի» կողմից: Ի դեպ, օրենսդիրը՝ որպես ամբողջ ժողովրդի ներկայացուցիչ և վերջինիս ընդհանրական կամքի արտահայտող, պետք է կարողանա զերծ մնալ առանձին սոցիալական խմբերի և շերտերի շահերի պաշտպանության հակվածությունից: Ցավոք, այսօր առանձին խմբերի մասնավոր շահերին սպասարկող օրենսդրական ակտերի ընդունումը ավելի շատ օրինաչափություն է, քան բացառություն: Բացի այդ ներկայումս չկա այնպիսի սոցիալական խումբ, որի շահերի բավարարումը (բնակչության այլ սոցիալական խմբերի շահերի անտեսման պայմաններում) կարողանա ապահովել հասարակության կայունությունը և օրենքի գործողությունը: Դրա համար պետք է բոլոր հիմնական սոցիալական ուժերի համաձայնությունը: Իսկ հասարակությունը ընդհանուր առմամբ կարող է համաձայնվել միայն բոլորի համար հավասար և արդար իրավական սկզբունքներին, որոնք թույլ չեն տա մի սոցիալական խմբի շահերի իրականացումը մյուս խմբի շահերի հաշվին:

Իրավունքում նպատակները հսկայական նշանակություն ունեն: Ա. Վ. Մալկոն և Կ. Վ. Շունդիկովը իրենց «Նպատակները և միջոցները իրավունքում և իրավական քաղաքականության մեջ» մենագրությունում նշում են, որ «օրենսդրության մեջ հռչակված են նպատակներ և առաջնահերթություններ, սակայն դրանց իրականացման համար կոնկրետ իրավական կառուցակարգերի և պայմանների բացակայությունը դրանք դարձնում են դատարկ հռչակագրեր, պետության բարի ցանկություններ»: Որպեսզի նպատակները, որոնց իրականացման համար ընդունվում են նորմատիվ-իրավական ակտերը, չկրեն հռչակագրային բնույթ և իրագործվեն համապատասխան հասարակական հարաբերությունների կարգավորմամբ, անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ հասարակական հարաբերությունների մասնակցիների շահերը:

Իրավաստեղծագործական կանխատեսումը վկայում է իրավական ակտի սոցիալական համարժեքության աստիճանի մասին: Իրավական ակտի սոցիալական համարժեքությունը ամբողջությամբ կախված է օրենսդիր մարմնից, որը որոշակի ձևով դրանցում ներդնում է հասարակական հարաբերությունների այս կամ այն մոդելներ: Իրավական նորմի կանխատեսական ապահովվածության գնահատման մեջ բացի օրենսդրից, գնահատման է ենթակա նաև իրավակիրառ մարմինների աշխատանքը, որոնց այս նորմերը անմիջականորեն ուղղված են:

Նորմատիվ-իրավական ակտի կանխատեսական ապահովվածության գործոնների տակ հասկացվում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող հանգամանքները, որոնց հետ իրավական ակտի փոխազդեցությամբ է պայմանավորված իրավական ակտերի կենսագործման, օրենսդրի կողմից դրված նպատակների իրագործման աստիճանը:

Օրինաստեղծ գործունեության կանխատեսական ապահովման գործոնների մեջ կարելի է առանձնացնել ներքոնշյալները.

1. *Հասարակական պահանջմունքների և շահերի համարժեք արտացոլումը:* Օրենքներում սոցիալ-իրավական տարաբնույթ շահերի ամբողջական և համարժեք արտացոլումը մեծապես լուծում է օրենսդրության արդյունավետության խնդիրը, իրավական ակտերում ներդնում է կանխատեսական ապահովվածության համապատասխան ներուժ:

2. *Ֆինանսական գործոնները.* բնութագրելով ապագա օրենքի գործողության ֆինանսական ապահովվածությունը՝ անհրաժեշտ է նշել վերջինիս՝ վերլուծության համար բավականին բարդ տնտեսական-իրավական բնույթը: Վերջինիս բարդությունը պայմանավորված է նրանով, որ օրենսդրության կենսագործման ծախսերը բազմաբնույթ են, իսկ վերջիններիս հաշվարկման մեթոդները թույլ չեն տալիս ամբողջությամբ գնահատել անհրաժեշտ ներդրումների ծավալը: Օրենքի գործողության մեջ դրվելու հետևանքով՝ տնտեսության վրա ազդեցության գնահատման տեսանկյունից բավական դժվար է հաշվարկել վերջինիս կենսագործման հետ կապված բոլոր ծախսերը: Օրենսդրական ակտի նախագծի իրացման համար ծախսերի համարժեքությունը պետք է ապահովվի օրինագծի ֆինանսական-տնտեսական հիմնավորվածության գնահատմամբ, ինչպես նաև տվյալ ոլորտում տնտեսական ազդեցության ճշգրիտ կանխատեսման հետադարձ գնահատմամբ:

3. *Սուբյեկտիվ գործոնները.* օրինաստեղծ գործունեության կանխատեսական ապահովման ընդհանուր կախվածությունը սուբյեկտիվ գործոններից այնպիսին է, որ օրենսդրական ակտի նախագծի իրագործման բոլոր հետևանքների արդյունավետ կանխատեսումը հնարավոր է միայն օրինաստեղծ գործունեության սուբյեկտի բավարար պատրաստվածության դեպքում, օրինաստեղծ մարմինների արհեստավարժ մասնագետների ապահովմամբ, որոնք կտիրապետեն կանխատեսական աշխատանքի հմտություններին: Ընդ որում, այստեղ առաջնայինը ոչ այնքան մասնագետների քանակի ապահովումն է, որքան վերջիններիս որակական հատկանիշները: Չէ որ «առանց առկա թերությունները վերացնելու, խորհրդարանում աշխատանքի իներտությունը հաղթահարելու պատգամավորները չեն կարող արդյունավետ լուծել իրենց առջև ծառացած խնդիրները»[8]:

Իրավաստեղծ գործընթացում այս մասնագետները կարող են էապես ազդել օրինագծի որակի և կանխատեսական ապահովվածության վրա: Այս մասնագետների խնդիրը պետք է լինի աշխատել այնպիսի որոշումների վրա, ինչպիսիք են անհրաժեշտ է արդյոք կոնկրետ հասարակական հարաբերությունների կարգավորումը, թե՝

[8] Տե՛ս **Каримов И. А.,** Модернизация страны и построение сильного гражданского общества – наш главный приоритет // Народное слово. – 2010:

ո՛չ, ի՞նչ սկզբունքներ պետք է հաշվի առնվեն, կատարել պատշաճ իրավական մոնիթորինգ, վեր հանել նորմատիվ-իրավական ակտի ընդունման հետևանքները, ճշգրտել ինչպիսի ֆինանսական ապահովում է պետք նշված իրավական ակտերի կիրառման համար և այլն: Իրավաստեղծ մարմնի մասնագետների պակասը կամ ոչ բավարար որակավորումը կարող են էապես սահմանափակել մշակվող նորմատիվ ակտերի կանխատեսական ապահովվածությունը:

4. *Կազմակերպչական գործոնները.* իրենց դրսևորվումն են գտնում օրենսդիր մարմնի առօրյա գործունեության մեջ: Պրակտիկայում առաջանում են բազում դժվարություններ կապված օրինաստեղծ գործունեության կազմակերպման հետ: Նորմատիվ-իրավական ակտի ստեղծման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել ընթացիկ կազմակերպչական հարցերի ողջ բազմազանությունը: Այնպիսի հարցեր, ինչպիսիք են մարդկային ռեսուրսների և ժամանակի պահանջը, օրինաստեղծ գործունեության սուբյեկտների փոխգործակցության միջոցները և կառուցակարգերը, իրավաստեղծ պրակտիկայի նկատմամբ հսկողության ձևերը, պետք է գնահատվեն ամենայն մանրամասնությամբ:

5. *Հոգեբանական գործոններ.* օրինաստեղծ գործունեության կանխատեսական ապահովվածության հոգեբանական գործոնները պետք է դիտարկվեն իրավաստեղծ գործունեության սուբյեկտների հոգեբանական բնութագրերի փոխազդեցության համատեքստում: Նման ազդեցությունը պայմանավորված է առաջին հերթին իրավաստեղծ գործունեության սուբյեկտների անձնական բնութագրերով: Վերջիններս պետք է հստակ պատկերացնեն հասարակության համար իրենց գործունեության կարևորությունը: Իրավաստեղծագործության սուբյեկտը պետք է «իր միջով անցկացնի» մշակվող իրավական ակտի ապագա (հնարավոր) կարգավորիչ ներուժը, ինչը կնպաստի իրավաստեղծ որոշումների բացասական հետևանքների նվազեցմանը:

Նշված գործոններից յուրաքանչյուրն ազդում է օրինաստեղծ գործունեության կանխատեսական ապահովման վրա: Միևնույն ժամանակ վերջիններիս ամբողջությունը, ընդհանուր արդյունքին ուղղվածությունը, այն է՝ որակյալ իրավական ակտի ընդունումը, վերջիններիս համակարգային բնույթ են տալիս[9]:

---

[9] Տե՛ս **И. Тультеев** «Правотворческая деятельность и прогнозирование», 2010:

Մեր օրերում բավարար չէ պարզապես պատրաստ լինել սոցիալական նորարարությունների ի հայտ գալուն, բայց կարելի է և պետք է կազմակերպության, հասարակության, պետության զարգացումը գիտակցաբար ուղղորդել նորարական զարգացումների ուղղությամբ՝ ցանկալի ապագայի նախագծման գիտության նորագույն մեթոդների իմացությամբ[10]:

Կանխատեսական ապահովվածությունը նորմատիվ-իրավական ակտի նախագծի *որակի նշանն է*, վերջինիս կիրառելիության և կենսունակության *պայմանը*, օրինաստեղծ գործունեության ընթացակարգային *պահանջը*, օրենքի *ունակությունը*՝ իրագործելու իր մեջ դրված կարգավորիչ գործառույթը՝ իրագործման բոլոր սպասվող և հնարավոր հետևանքների հաշվարկմամբ:

Եզրակացնելով կարելի է փաստել, որ այսօր, երբ ՀՀ-ում անցկացվող բարեփոխումները պահանջում են իրավական համակարգի նորմատիվային բաղադրատարրի էական վերափոխում, պարզ է դառնում, թե ինչքան կարևոր է հենց օրենքի ստեղծման գործընթացը, վերջինիս ծրագրավորումը, կանխատեսման գործառույթի իրացումը, ապագա նորմատիվ իրավական ակտի նախնական կոնցեպտի մշակումը, նախագծի կազմումն ու քննարկումը, տարբեր սոցիալական խմբերի կարծիքները և շահերը հաշվի առնելը:

Ани Варданян
Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

ПРОГНОСТИЧЕСКАЯ ФУНКЦИЯ КАК ФАКТОР ЭФФЕКТИВНОСТИ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

В статье рассматривается современное состояние прогностической обеспеченности законодательной деятельности. Обосновывается актуальность исследования соответствующих проблем как неотъемлемого элемента процесса подготовки и принятия законодательных решений. Определены основные факторы прогностической обеспеченности законотворческой деятельности.

[10] Տե՛ս Материалы Международной конференции «Путь в будущее – наука, глобальные проблемы, мечты и надежды». – М., 2008, էջ 9:

Ani Vardanyan
PHD student at the YSU Chair of Theory and History of State and Law

FORECASTING FUNCTION AS A FACTOR FOR THE EFFECTIVENESS OF LEGISLATIVE ACTIVITY

The article examines the current state of forecasting function. The research of law forecasting problems, as an integral part of the preparation and adoption of legislative solutions is relevant. The author defines the main factors of forecasting of the legislative activity.

Բանալի բառեր՝ կանխատեսում, իրավաստեղծագործություն, օրինաստեղծ գործունեություն, կանխատեսական ապահովվածություն, իրավաստեղծ գործընթաց, պլանավորում, օրենսդրություն:
Ключевые слова: *прогнозирование, правотворчество, законодательная деятельность, прогностической обеспеченность, правотворческий процесс, планирование, законодательство.*
Key words: *Forecasting, Law-making, Legislative activity, Forecast availability, Law-making process, Planning, Legislation.*